Ս. ՄԱՐՇԱԿ

ՀՐԴԵՀ

ՆԿԱՐՆԵՐ
Վ. ԿԱՆԱՇԵՎԻՉԻ

ՊԵՏՀՐԱՏ—ԵՐԵՎԱՆ
1936

ՀՍՍՀ-ՍՍՀ

4140



Մեծ շուկայի հրապարակում,
Հրշեջ խմբի դիտարանում
Ամբողջ որը
Դիտակալը
Լուռ նայում է իր չորս կողմը՝
Դեպ արևելք,
Դեպի հարավ,
Դեպի հյուսիս,
Դեպ արևմուտք
Չի յերևում, արդյոք, ծուխ-մուխ։

891.71 Ս
Ս-38
30 MAY 2011

Մայրը շուկա ճամբա ընկավ
Ու պատվիրեց իր աղջկան.
«Վառարանին դու ձեռ չտաս,
Կրակը կայրի, անուշ Լենա»։

Հազիվ մայրը քիչ հեռացավ,
Վառարանին նա մոտեցավ,
Նայեց կարմիր հուր-ճեղքին,
Յերգող-շաչող կրակին։

Յեվ բաց արավ դռնակը նա,
Փայտից թռավ կրակն ահա,
Հատակն իսկույն բոցավառվեց,
Սփռոց, սեղան բոցը բռնեց։

Ճարճատեցին աթոռները,
Կրակ ընկավ վարագույրը,
Ծուխը լիզեց հատակը,
Բռնեց պատերն ու ծածկը։

1009
396476
40121



2 6 JUN 2013

Դարպասները բացվեցին,
Դրկիցները վազեցին
Մեկը դույլով, մեկն ամանով,
Վոր հանգցնեն տունը վառվող։
Հրդեհ, հրդեհ։
Պատուհանից ինչպես հեղեղ
Վայր թափվեցին գլխակոր
Պրիմուս, նկար, բազկաթոռ,
Աթոռիկներ և ինքնայեռ...
Հրդեհ, հրդեհ։

Մեծ շուկայի հրապարակում,
Հրշեջ խմբի դիտարանում.—
Զը՛նգ, հա, զը՛նգ,
Զանգ, զընգ.—
Ղողանջում է արթուն զանգը,
Սկսում է աշխատանքը,
Ամբողջ բակը խլրտում,
Դեպ գումակը հավաքվում
Տանում ջրհան,
Ցելարան։

Դարպասներից տակառներ
Դուրս են բերում անհամբեր։
Մի ձիավոր առջևից
Մեծ փողոցով արշավեց,
Ապա հրշեջ խումբը հերթով
Պայծառ, դեղին սաղավարտով,
Շուկան կտրեց ու անցավ,
Դեպի հրդեհը սլացավ։

Տան մոտ փողու ամպի միջին
Կանգնեցրին նժույգներին։
Ջրհան փողը բացելով,
Անցկացրին փողոցով։

Յերկար փողը լցվեց, դողաց,
Քիչ ելը մնում պայթեր հանկարծ,
Բաց թողեց իր շիթը ջրի
Մինչև տակը առաստաղի։

Ե՛յ, բրիգադ
Արագ-արագ։

Բոցը վոռնաց, ինչպես գազան,
Յերկու հրշեջ ծածկից թռան,
Իսկ կացնավոր քաջ Մուկուչին
Ուզեց խեղդել ծխի միջին։

Հին հրշեջ է մեր Մուկուչը,
Շատ է ընկել տանիքիցը,
Քսան տարի հրդեհ հանգցրել,
Շատ մարդիկ է մահից փրկել։

Վոչինչից լե չի վախենում,
Թաթմաններն է նա հագնում,
Պատով անահ վեր մագլցում,
Սաղավարտն է փայլում բոցում։

Մին ել հանկարծ տանիքից
Մի ձայն լսվեց տանջալից։
Կրակ ու բոց ճեղքելով,
Մուկուչն անցավ տանիքով,
Պատուհանից նայեց մի լավ
Յեվ, ինչ... մի մեծ կատու տեսավ։
«Դու կրակում կկորչես,
Ցեկ գրպանս դնեմ քեզ»։

Փոթորկում է կրակն անսանձ
Լեզուներով ցրիվ յեկած,
Մյուս շենքերը լեզում ուրախ...
Մարտնչում է Մուկուչն անվախ,
Փնտռում բոցում իր ճամբան,
Մարդիկ կանչում ոգնության։

Յեվ հնազանդ այդ կանչին,
Քսան քաջեր վազեցին։
Ծածկն են՝ ջարդում կացիններով,
Բոցը մարում ջրհաններով։

Ծուխը թանձր ամպի պես
Պատում է վոտք ու յերես,
Բոցը կծկվում ու չարանում,
Աղվեսի պես ծալ է լինում,
Փախչում ջրի հոսանքից
Յեվ հալածվում տանիքից։

Ու սևացան փայտերն՝ ահա,
Ճեղքերումն է հուրը հիմա...

«Եյ, Մուկուչ ջան, ցած արի,
Ել տները չեմ այրի»։

— «Լռի՛ր, կրակ դու խարդախ,»
Հրշեջն ասած մեր անվախ, —
«Հրշեջ Մուկուչ ցույց կտա քեզ.
Միայն բանտում տեղ կտամ յես։
Վառարանում միայն մնա,
Լամպերի մեջ, մոմի վրա»։

Կրակն ելի մի անգամ
Թույլ դողդողաց ու հանգավ։

Նստարանին դարպասի մոտ
Արտասվում է Լենան դարդոտ,
Իսկ լայն բակում
Զրհաններն են փնչփնչում,
Շրջակայքում
Անիվներն են ճռնչում։

Խեղճ աղջկան հեծկլտող
Մուկուչն ասաց ժպիտով.
«Լաց մի՛ լինի դու յերկար.
Տուն կշինեն ձեզ համար։

Ազատված է կատուն անա,
Ա՛յ, մի նայիր, ինձ մոտ է նա»։
Լենան կատվին պինդ գրկեց,
Կամաց-կամած հանդարտվեց։

Յեվ դարպասի առջևից
Մի ճիավոր արշավեց։
Ապա հրշեջ խումբը հերթով
Պայծառ, դեղին սաղավարտով
Դանդաղորեն տուն է դառնում,
Տակառներն են ցատկում, թնդում։

Ահա անցավ գործին սովոր,
Աչքը կապած ու վիրավոր
Քաջ Մուկուչը կապած գլխ
Ու ջարդոտված սաղավար
Յեվ ինչպես նա աշխա
Յեվ դարպասից տունը փրկ

ՀԱՅ ՍՍՀ ... ՀԱԽՀ-ՍՍՀ
Մ. Մասիսյան անվան
<< Ազգային գրադարան
NL0383831

3400
4140

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

С. МАРШАК

ПОЖАР

Պատ. խմբ. Հ. Հայրապետյան Տեխն. խմբ. Հ. Տեր-Դավ

Հրատարակ. № 3465. Հանձնված է արտադրության 13/I 1936 թ. (
տպելու 22/II 1936 թ. Ստատֆորմատ 85 — 148x21
Крайлит № 00—11450. Тираж—5000. Заказ №245. Типография им. Стач
Ростов на-Дону.

891.715
С-38